ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » մարտի 2020 թ. N 226 - Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի 1919–Ն որոշման 16-րդ կետի «ա» ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման N 3 և N 4 հավելվածներում բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 04 խմբի 02 դասի «1033 Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրի շրջանակներում իրականացվող «12001 Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» միջոցառման՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»

հոդվածով նախատեսված 20,000.0 հազար դրամը՝ ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրթության, էթնիկ ինքնության պահպանությանն ու զարգացմանը, ինչպես նաև իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեությանը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, բաշխել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջև՝ համաձայն NN 1, 2, 3 հավելվածների:

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ